№ 234 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1918
ՔԱՌԱՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 234

Նոյեմբերի 1-ից մինչև դեկտ. 1 ը Թիֆլիսում 10 ռուբլի։

Առանձին համարները Թիֆլիսում և գաւառներում 50 կ., երկաթուղային կայարաններում 70 կոպ.։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Tiflis, Rédaction „Maschak"
Соломоновская, 21.

Խմբագրատան տելեֆոն № 2—53

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են՝ իւրաքանչիւր տողատեղին 70—40 կոպ.։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել թէ հին հասցէն և 1 ռուբլի։

Ռուբէն Նիկողայոսեան Գալստեանցն իր ընտանիքով, Սաթենիկ Տէր Գրիգորեանցն իր ամուսնու հետ, Ստեփան Տէր Յովհաննիսեանն իր զաւակներ Մանիայի, Արուսեակի և Մարտիրոսի հետ միասին յայտնում են իրանց ջերմ շնորհակալութիւնը բոլոր ընկերներին, պաշտօնակիցներին, բարեկամներին և ծանօթներին, որոնք յարգեցին իրանց վաղաժամ մահացած թանկագին եղբօր՝

Յովհաննէս Նիկողայոսեան ԳԱԼՍՏԵԱՆՑԻ

յիշատակը։

1037. 1—1

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹԻՒՆԸ
Հինգշաբթի, նոյեմբերի 14-ին
Մասնակցութեամբ Յ. ԱԲԵԼԵԱՆԻ
կը ներկայացնէ
ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ
ԿՈՐԾԱՆՎԱԾԸ
Դրամա 4 արար.։
Տեղերի գները սովորական են։
Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 7-ին.
Կասսան բաց է ամեն օր ժամը 12—3-ը և 6—8-ը։
Ռեժիսսեօրական խորհուրդ
Հայ Դրամատիկ Դերասանների Միութեան Խորհուրդ
տպ. 1036. 1—1

Բացված է
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺԱՐԱՆ
Մշտական մահճակալներով
ԲԺՇԿԱՊԵՏ
Ռ. ԴՕՆԽԻՆԻ
Նախկին երկար-ժամանակեայ ասիստենտ Փարիզի և Վիէննայի համալսարանների աչքի հիւանդութիւնների կլինիկաների.
ընդունում է
Աչքի հիւանդութիւններ
ունեցողներին ցերեկվայ ժամը 9-ից մինչև $11^1/_2$-ը և երեկ. 4—$7^1/_2$-ը. Միքայէլեան փող. 141 («Ապոլլոյի» մօտիկ)։ Ծանր և վիրաբ. կարօտ հիւանդները ընդունվում են լրիւ պանսիօնով։
տպ. (ա. օ.) 849. 100—32

ԲԺԻՇԿ
Կ. Յ. ՂԱԶԱՆՃԵԱՆ
Ներքին և երեխայոց հիւանդութիւններ։
Ընդունում է ամեն օր առաւ. ժ. 10—12-ը, երեկ. ժ. 5—7-ը, Արաս-Աբադսկի պերեուլոկ № 7։
տպ. (ա. օ.) 877 100—33

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Նախկին օրդինատոր Պետրոգրադի սիֆ. [illegible] կապէս միզասեռ., վեներական և սիֆիլիս հիւանդութիւն ունեցողներին։
Առաւօտ. ժամը 10—12.
Երեկ. » 5—7.
Սեմենովսկայա փ. 18 (Վորոնցովի արձանի մօտ։ Բնակարանը Սեմեոնովսկայա, 16։
տպ. (ե. հ. շ. կ.) 100—24

ԲԺԻՇԿ
ԳՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ
Նախկին ասիստենտ Ժընէվի համալսարանի կլինիկաների և պրօֆ. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բուժարանի։
ՆԵՐՔԻՆ և ԿԱՆԱՆՑ հիւանդութիւններ. մասնագէտ ՎԵՆԵՐԱԿԱՆ (ՍԻՖԻԼԻՍ, ներարկումն «606»-ի և «914»-ի), ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ (ՀԻՆ և ՆՈՐ ՏՐԻՊԵՐ և նրա կոմպլեկացիաները) և ԿԱՇՈՒԻ ցաւեր։ Էլեկտրաբուժական կաբինետ։
Ընդունելութիւնը ամեն օր առ. ժամը 10—1-ը, երեկ. 4 — 6-ը։ Կիրակի օրերը միմիայն ցեր. ժամը 12—1-ը։
Կիրօչնայա փող. № 11.
տպ. 789. 100—51

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
Նախկին ասիստենտ Բեռլինի և Մոսկվայի համալսարանների կլինիկաների, մասնագէտ ներքին հիւանդութիւնների—Թոքերի և սրտի. ընդունելութիւնը՝ իր ռենտգենեան և լոյսի ու էլեկտրաբուժական կաբինետում։ Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։
Ամեն օր՝ 9–1 և 5–8 ժամը երեկ.։ Բեբուտովսկայա փ., № 23. Հեռ. 7—92.
տպ. օ.) 100—42

ԲԺԻՇԿ
Մ. Կ. ՎԱՆՑԵԱՆ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւն ամեն օր՝ 12—1-ը ցեր., 6—7 երեկոյեան։ Շաբաթ օրերը ձրի ընդունելութիւն չքաւորների համար։
Абасъ-Абадская пл. д № 1.
տպ. (ա. օ.) 976. 100—16

ԲԺԻՇԿ
Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։ Հիւանդների համար անհրաժեշտ անալիզները կատարվում են ՁՐԻԱԲԷՍ։
Ընդունելութիւնը եր. ժ. $5^1/_2$—7
Հասցէ՝ Бебутовская, № 56.
տպ. (օ. մ.) 504. 100—51

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
Մ. Մ. ԿԷՕՆՃԵԱՆԻ
[illegible] ատամներ, արհեստական ատամներ՝ ֆարֆորից և ոսկուց (առանց քիմքի), վինտով ատամներ և այլն։
Ընդունելութիւնը՝ ցեր. 10—2 ժ.
Երեկոյեան 4–6 ժ.
Կիրակի օրերը 10—12 ժ.
Լերմոնտովսկայա փողոց № 1, մուտքը Արաս Աբադսկի պերէուլոկից՝
տպ. 885. 100—20

ԲԺԻՇԿ
Ա. ՇԱՀԲԱԶԵԱՆ
Նախկին ասիստենտ Բեռլինի համալսարանի կլինիկաների
Մասնագէտ մանկաբարձութեան, կանանց հիւանդութիւնների, նրանց միզասեռական և վեներական ախտերի («606» և «914»), էլեկտրաբուժում արգանդի և ձուարանների խրոնիկական բորբոքումների. Ամեն օր, երեկ. ժամը 5—7-ը, կիրակի օրերը առաւ. ժ. 10—11-ը։ Հասցէն՝ Օլգինեան փողոց, Մելիք-Ազարեանի տուն, № 3, բն. 12, հեռախօս № 16—71։
տպ. (ե. հ. շ. կ.) 100—31

ԲԺԻՇԿ
Վ. Կ. Մարգարեան
Ներքին և ջղային հիւանդութիւններ. Բժշկութիւն և դաստիարակութիւն յետամնաց, ապուշ, անհորմալ երեխաների։ Ընդունելութիւնը ամեն օր՝
առաւ. ժամը 9—11-ը
երեկ. ժամը 5—7 ը
Абасъ Абадская пл. уголъ Могнинск. ул. № 3,
տպ. (ե. հ. կ.) 757. 30—28

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Մենք «Մշակի» № 229-ի մէջ տպված առաջնորդողով առաջարկեցինք, որ ծախսված հասարակական գումարների ստուգութեան համար անհրաժեշտ է կազմել մի հեղինակաւոր վերստուգիչ մարմին, որը ստուգելուց յետոյ կը տայ հասարակութեանը հրապարակօրէն զեկուցում վերջ տալու ամեն տեսակ շշուկներին և տրտունջներին և միաժամանակ մերկացնելու հասարակական դրամներ վատնողներին։

Անկասկած նախաձեռնութիւնը այս դէպքում պէտք է պատկանէ մեր կառավարութեան։

Հայկական կառավարութիւնը, նամանաւանդ մեր նոր կօալիցիօն մինիստրութիւնը և կամ պետական ծախքերի վերահսկիչը պէտք է հրաւիրէ հասարակական այլ և այլ խմբերից միանգամայն անկախ, անկուսակցական, քաղաքական մտքով, և միաժամանակ հաշուապահութեան մէջ ձեռնհաս անձինք, որոնք ղեկավարութեամբ պետական վերահսկիչի կը ձեռնարկեն [illegible] և կամ մասնաւոր անհատների միջոցով ծախսված հասարակական գումարների ստուգութեան։

Ինչպէս յայտնի է, վերջերս մեր մէջ բուսան բազմաթիւ յանձնաժողովներ, կոմիտէներ, որոնք այլ և այլ նպատակներով, գլխաւորապէս հայ ժողովրդի փրկութեան, պաշտպանութեան, շինարարութեան, վերաշինութեան և այլ բազմապիսի անուններով, հանդէս եկան հասարակութեան առաջ, ժողովեցին մեծաքանակ գումարներ, նոյն իսկ ստացան այլ պետութիւնների մարդասիրական հաստատութիւններից և պետական ներկայացուցիչներից հարիւր հազարներ և միլլիոններ, ծախսեցին և դեռ էլի ծախսում են, սակայն ոչ մէկը պարտաւոր չէ համարում հասարակութեանը հաշիւ տալու, միանգամայն ի չարը գործ դնելով ներկայ ազատ ռէժիմի հասարակարգը։ Այդ մարմիններն և կամ անհատները դառնում են այսպէս. քանի որ կառավարութիւնը հին ռէժիմի նման չէ պարտադրում հաշուետուութիւն անելու և ստուգելու ծախքերը, ուրեմն և մենք ազատ ենք ինքնագլուխ ամեն ինչ անելու և ոչ ոքի առաջ պարտաւոր չենք հաշիւ տալու։ Այս տեսակ ազատ վերաբերմունք դէպի հասարակական գումարները երեւան եկաւ հէնց վերջերս, երբ «Հորիզոնը» յայտարարեց, թէ Հայ Ժող. Կուսակցութիւնը ստացել է մի ինչ-որ, դեռ հրապարակօրէն ոչ յայտնի, շինարարական կոմիտէից հարիւր հազար ր.։ Այս բանը առիթ տուեց լրագրական բանակռուի, որը շատ բան մերկացրեց և որի մասին յետագայում կարտայայտվենք։

Պէտք է որ առաջ ձեռնարկել այս գործին, որովհետև մեր ցաւերը շատ-շատ են և անհրաժեշտ է հասարակական օգնութիւն. իսկ այժմ, ինչպէս ցոյց է տալիս գաղթականական գործը, հասարակութիւնը ամեն բանի վերաբերվում է քար անտարբերութեամբ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Վրաստանի Հեռագրական Գործ. միջոցով)

ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Գերմանական մամուլ)

ԲԵՐԼԻՆ, 11 նոյեմբերի.—Մինիստրների խորհրդակցութիւնը կայացաւ նոյեմբերի 10-ին նրանից յետոյ, երբ կարդացվեցին զինադադարի հիմնական կէտերը. Պայմանները ընդունվեցին։ Հաշտութեան պատգամաւորութեանը տրվեցին համապատասխան հրահանգներ։

Լոյս նոյեմբերի 11-ի գիշերը ուղարկվեց Վաշինգտոն՝ Լանսինգին հետևեալ պաշտօնագիրը.

«Պարոն մինիստր. Գերմանական կառավարութիւնը, համոզված դեմօկրատական նպատակների ու իդէալների ընդհանրութեան մէջ, դիմեց Միացեալ Պետութիւնների նախագահին առաջարկելով վերականգնել հաշտութիւնը։ Այդ հաշտութիւնը պէտք է համապատասխանէ այն սկզբունքներին, որ ինքը նախագահը շարունակ ընդունել է։ Այդ սկզբունքներով բոլոր վիճելի հարցերը պէտք է լուծվեն արդարութեամբ ու պէտք է հաստատվի ժողովուրդների լիգա։

«Ապա նախագահը յայտնեց, թէ ինքը չի վստահանայ պատերազմ մղել գերման ժողովրդի դէմ և թէ նա ցանկութիւն չունի արգելք լինել նրան՝ իր լայն զարգացման ճանապարհի վրա։

«Գերման կառավարութիւնը ստացաւ զի-

ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՌԼԱՄԵՆՏ

(Շարունակութիւն նոյեմբ. 7-ի նիստի *)

Փիրումեան (ս. դ.) մատնանշելով փախստականների այժմեան սոսկալի դրութիւնը, որ արգասիք է պետական ապարատի թերութեան, իր ճառը վերջացնում է այս խօսքերով. «Հարկաւոր են հսկայական ջանքեր շովինիզմի հոսանքը խափանելու համար և լրբացած շովինիստների գլուխների վրայով միացնել դեմօկրատիայի ոյժերը ընդդէմ սկսվող նոր արկածախնդրութեան» (ծափեր)։

Գ. Կիկօձէ (ն. դ.) ասում է, թէ մենք վկայ ենք վրացական և հայկական ինտերնացիօնալի պարտութեան։ Հայկական քաղաքականութիւնը պաշտպանում է ամբողջ հայ ժողովուրդը. դա բացատրվում է նրանով, որ մենք ապրում ենք ազգային պայքարի շրջանում։ Հայ և վրացի ժողովուրդների միջև գոյութիւն ունեն հակառակ ազգային շահեր։ Հայերի ձգտումը միանգամայն բնական է ու նորմալ, որովհետև նրանք ամբողջական տերիտորիա չունեն և այդ պատճառով ձգտում են ոչնչացնել վրաց պետութիւնը՝ իրանց տերիտորիան հաստատելու համար։ Վերջին օրերում հայերի ռազմական տրամադրութիւնը հետեւանք է միջազգային հորիզոնի վրա կատարվող փոփոխութիւնների։ Հայերը համոզված են, թէ անգլօ-ֆրանսիացիք Կովկասում յենվելու են նրանց վրա։ Սակայն Անգլիայի ռէալ շահերը տալիս են Կովկասում նրա քաղաքականութեանը բոլորովին հակառակ ուղղութիւն։ Բայց հայերի այդ հաւատը առ անգլիացիք հռետորը գտնում է անհիմն և իբրև ապացոյց բերում է «Տանի» յօդուածը, որ խօսում է հայերի դաւաճանութեան մասին Բաթումի դէպքերի առիթով։ Հայերը պէտք է մնան իրանց սեփական սահմանների մէջ, հակառակ դէպքում նրանց չափազանցած իմպերիալիզմը կարող է թաղել նրանց ազգային իդէալները (ծափահարութիւն)։

Նիստը յետաձգվում է երեկոյեան։

Երեկոյեան նիստ

Ռ. Գաբաշվիլի (ն. դ.) խիստ ու թունալից քննադատութեան է ենթարկում «Դաշնակցութիւն» կուսակցութեանը, որ հռետորի կարծիքով լիովին արտայայտում է հայ ժողովրդի ձգտումները։ Հռետորը խորհուրդ է տալիս կառավարութեանը չը բաւականանալ գեղեցիկ դեկլարացիաներով ու հանրապետութեան թշնամիների դէմ ձեռք առնել ամենախիստ միջոցներ, որոնք ապահովեն պետութիւնը պրովոկատորներից և աւազակներից (ծափեր)։

Թարխանեան (ս. յ.) դաշնակցականներին անուանում է վրաց սոց. դեմօկրատների աշակերտներ։ «Էրթօբան» միաժամանակ գրում էր, թէ հայ փախստականները դիտմամբ թափում են հիւանդներին, որպէս զի վարակը տարածեն վրացիների մէջ։ «Հորիզոնը» այժմ ուրիշ դարձուածքներով մեղադրում է Վրաստանի կառավարութեանը փախստականներին կոտորելու մէջ։ Վերջում հռետորը խորհուրդ է տալիս վերացնել դեֆեկտները փախստականական գործում, որպէս զի դաշնակցականներն առիթ չունենան փախստականական հարցը վերածել դաշնակցական հարցի։

Աւետիսեան (դաշ.) համամիտ է Բարխուդարեանի առաջարկին՝ յետաձգելու հարցի քննութիւնը, որպէս զի իր ֆրակցիան հանդէս գայ փաստերով։ Հռետորը պաշտպանում է Դաշնակցութեանը արկածախնդրութեան մէջ մեղադրելուց և ասում է, որ եթէ նա իսկապէս արկածախնդրական կուսակցութիւն լինէր, այն դէպքում հայ դեմօկրատիան մինչև օրս երես կը շրջէր նրանից։ Հռետորը բողոքում է այն ակնարկների դէմ, թէ կամուրջի պայթումի մէջ մեղաւոր են դաշնակցականները, և մատնանշում է, թէ Վրաստանում գործող դաշնակցականների կենտրոնական օրգան «Աշխատաւորի» մէջ ոչ մի խիստ յօդուած երբէք չէ եղել վրաց կառավարութեան դէմ. Վրաստանի սահմաններում ապրող դաշնակցականները իրանց վերաբերմունքը դէպի վրաց կառավարութիւնն ու Վրաստանի անկախութիւնը ներկայացրին գրաւոր կառավարութեան նախագահին։ Բայց կառավարութեան մէջ սահմանվել է փախստականների հարցի վերաբերմամբ նուազեցնելու սիստեմ, որը և ստեղծում է ամեն տեսակ թիւրիմացութիւններ։

Ասելով, թէ ոչ մի հայ խմբակ չէ ցանկանում թողնել Վրաստանի սահմաններում, թէ փախստականները հարիւրներով մահանում են նաև Հայաստանում, հռետորը բողոքում է, թէ չի կարելի լռել, երբ մեր աչքերի առաջ մեռնում է մի ժողովուրդ, որ ստեղծել է Դաշնակցութիւն կուսակցութիւնը (ձայներ տեղից. «Իսկ Վրաստանը ինչ անէ»)։

Վերջում հռետորը, զարմանք յայտնելով որ տեղական հայ ազգաբնակութիւնը ոչինչ չէ անում քարոզչապէս ու նիւթապէս փախստականների համար, ասում է թէ Շուլավէրի պաշարման և զէնքերը խլելու նման գործողութիւններով վրաց կառավարութիւնը առաջ է բերում հայ հասարակութեան մէջ աւելորդ անհանգստութիւն։ Հռետորը վերջացնում է իր ճառը Փիրումեանի խօսքերով, յորդորելով երկու ժողովուրդների դեմօկրատիային միանալ։

Նորից հանդէս է գալիս Ժորդանիա և անում է փաստացի նկատողութիւններ Աւետիսեանի ասածների դէմ։ Նկատելով որ դաշնակցականների գործելակերպը տարբեր է, նորից շեշտում է, թէ հայ մասսան Վրաստանում ցանկանում է խաղաղ ապրել ու գործել վրաց դեմօկրատիայի հետ, բայց ղեկավարները կամենում են այլ քաղաքականութիւն, ստեղծում են այն, ինչ ստեղծել են ամենուրեք։

Մինիստր-պրեզիդենտը վերջում ասում է. «Մեզ չը հաւատացին դաշնակցականները, երբ մենք նախազգուշացրինք, թէ թիւրքերն են, որ չեն թոյլ տալիս փախստականներին վերադառնալ հայրենիք։ Այժմ ես հնարաւորութիւն ունեմ ձեզ փաստ բերել։ Անկասկած «Հորիզոնի» համարները հասել են փախստականներին, և նրանք հաւատացին, թէ թիւրքերն իսկապէս արգելք չեն լինում իրանց վերադառնալ, և սկսել են անցնել սահմանը, որովհետև ես հէնց հիմա ստացայ գեներալ Մազնիևից հետևեալ հեռագիրը. «Ծալկայի փախստականները անցնում են սահմանը։ Թիւրք զօրքերը գնդակահարում են նրանց։ Կապիտան Կանդելակիի հաղորդագրութեան համաձայն, տեղի է ունենում ամբողջ ճակատամարտ։ Թիւրքերը կրակում են թնդանօթներից, նետում են փախստականների վրա ձեռքի ռումբեր։ Սպանվածների թիւը մեծ է»։ Այժմ դուք տեսնում էք, թէ ում քաղաքականութիւնն էր փախստականների համար օգտակար ու կանոնաւոր» (ընդհանուր ծափահարութիւններ)։

Ի. Ծերեթելի.—Վրաստանի հանրապետութեան թշնամիների մէջ, որոնք մեր անկախութեան սկզբնաւորութիւնից դէպի Վրաստանի դեմօկրատական հասարակակարգը բռնեցին անհաշտ թշնամական դիրք, վերջին ժամանակներս սկսեցին տարածվել այնպիսի բամբասանքներ և կոչեր, որոնց հետևանքը կարող է լինել հայ ժողովրդի ապստամբութիւն Վրաստանում, ինչպէս և երկու ժողովուրդների արիւնահեղ ընդհարում։ Դաշնակցական պատգամաւորները, որոնց մենք հարցեր տուինք, խուսափեցին ուղիղ պատասխանից։ Նրանք յայտարարեցին, որ մասնակից չեն այդ ագիտացիային, սակայն չասացին, թէ ինչ վերաբերմունք ունեն դէպի այն։ Նրանք չասացին, թէ արդեօք կաջակցեն կառավարութեան, եթէ սկսի կռուել այդ ագիտացիայի դէմ։ Նրանց լռութիւնը ցոյց է տալիս, որ ոչ կառավարութիւնը, ոչ էլ սօցիալ-դեմօկրատիան նրանց մէջ աջակիցներ չեն գտնի ազգային կրքերի բռնկման դէմ կռուելու գործում։ Սակայն եթէ նրանք խուսափեցին այդ խնդրից, դրա փոխարէն աջակողմեան հռետորները ներկայացրին մեզ Դաշնակցութեան ձգտումների սկզբունքային հիմնաւորումը։ Այդ արին Կեկելիան պառլամենտար ձևով և Գաբաշվիլին և այլք, ըստ սովորոյթի, ծաղրածուական ձևով։ Նրանք ապացուցում էին, որ հայ ժողովրդի ազգային զարգացման շահերը հակադիր են վրաց ժողովրդի զարգացման շահերին։ Այո, դաշնակցականները իսկապէս որ այդպէս են հասկանում հայ

---

*) Տես «Մշակ» № 233.

դադարի պայմանները 50 միլիոնի ծովապաշարումից յետոյ այդ պայմանները, մանաւանդ փոխադրական միջոցների յանձնումը, Գերմանիայի պարենաւորման գործը կը դարձնեն յուսահատական ու սովամահութեան կը մատնեն միլիոնաւոր կանանց, տղամարդկանց և երեխաների: Մենք ստիպված ենք ընդունել պայմանները:

«Մենք ամենալուրջ կերպով նախագահ Վիլսոնի ուշադրութիւնն ենք հրաւիրում այն հանգամանքի վրայ, թէ պայմանների գործադրութիւնը պէտք է առաջ բերէ գերման ժողովրդի մէջ բոլորովին հակառակ զգացմունք, որ կազմում է անհրաժեշտ նախերգանք ժողովուրդների լիգա կազմակերպելու համար և երաշխաւորում է հաստատուն խաղաղութիւն հիմնված արդարութեան վրայ:

«Այդ պատճառով գերման ժողովուրդը այս վերջին ժամին դիմում է նախագահին յամառ խնդիրքով, որպէս զի նա դաշնակիցների հետ միասին վերաքննէ Գերմանիայի համար ծանր պայմանները բարելաւելու մտքով»:

Ստորագրված է արտաքին գործերի մինիստր:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

(Գերմանական մամուլ, 11 նոյեմբերի)

Սակսոնիայից հաղորդում են, թէ այնտեղ կազմակերպվել է ժողովրդական կառավարութիւն: Թագաւորը հրաժարվել է, բոլոր մինիստրները հրաժարական են տուել:

Կայսրը և գահաժառանգը աւտոմոբիլներով եկան Մաաստրիխտ և այնտեղ սպասում են հոլլանդական կառավարութեան վճռին, որի համաձայն նրանք կարող են մնալ Հոլլանդիայում:

Նոյեմբերի 10 ին երկու սոցիալիստական կուսակցութիւնները բանակցութիւններից յետոյ յանգեցին համաձայնութեան, որի ույժով կազմվեց նոր ժողովրդական կառավարութիւն: Վերջինիս մէջ մտան սոցիալիստներ Էբերտ, Շէյդեման, Լանդսբերգ, և անկախ սոցիալիստներ Հաազէ, Դիտման և Բարտ:

Քաղաքական կաբինէտը կոչվելու է «Ժողովրդական կոմիսարների խորհուրդ». Հաազէն և Էբէրտը հանդիսանում են լիդէրներ կաբինետում:

Յեղափոխական շարժումը հետզհետէ տարածվում է ամբողջ պետութեան մէջ: Ամենուրեք կազմակերպվել են բանուորների և զինուորների խորհուրդներ: Յեղափոխական շարժումը ընթանում է ընդհանուր առմամբ առանց արիւնհեղութեան: Մի քանի քաղաքներում տեղի են ունեցել ցոյցեր ու գործադուլներ, որոնք անցել են խաղաղ:

Գլխաւոր շտաբը հաղորդում է, թէ զինւորների խորհուրդ կազմակերպվեց նաև զօրաճակատի վրա խաղաղ կերպով: Խորհուրդը կապ է հաստատել ֆելդմարշալ Հինդէնբուրգի հետ և առաջարկել է նրան իր պայմանները:

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲԻՒՐՈՅԻՑ

◆ Հայկական միսսիայի ստացած միանգամայն վստահելի տեղեկութիւնների համաձայն՝ անգլիական համայնքների պալատում հարցապնդում է եղել Բագուի դէպքերի մասին: Հարցապնդմանը պատասխանելով լորդ Սէսիլն ասել է հետեւեալը.

«Բագուում կրած մեր անյաջողութեան մէջ հայերի վրայ ոչ մի մեղք չէ ընկնում, և նրանց հասցէին ուղղված որեւէ մեղադրանք լինել չէ կարող: Նրանք ամեն բանում գործել են գեներալ Դոնստէրվիլի հրամանների համաձայն, և հէնց նոյն գեներալի ցուցմունքներով էլ հայերը նահանջել են Բագուից»:

Տեղի ունեցած այս թիւրիմացութիւնների ու անտակտութիւնների համար գեն. Դոնստէրվիլը հեռացված է պաշտօնից և կանչված ի պատասխանատուութիւն:

⁂ Հայկական միսիան Վրաստանում Գանձակի հայ լուսաւորչական հոգևոր կոնսիստորիայից ստացել է յատուկ գրութիւն, որով բողոքվում է այն բանի դէմ, որ հայերէն լեզուով գրված բոլոր թղթակցութիւններն ու պաշտօնական գրութիւնները բռնված են սահմանում, որի դէմ առաջարկվում է կարգադրութիւն՝ նամակները ճշտութեամբ տեղ հասցնելու համար: Այս մասին հայկ. միսիան արդէն իր բողոքն է ներկայացրել Ադրբէջանի դիւանագիտական միսիային Վրաստանում:

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Պետրովսկում կազմակերպվել է կովկասեան գիւղացիական կառավարութիւն Բիչերախովի գլխաւորութեամբ: Նոր կառավարութիւնը արդէն սկսել է հրատարակել իր «Լրաբերը»: Կառավարութեան կազմը հետեւեալն է. Լ. Բիչերախովը վարում է զինւորական և ծովային բաժանմունքը և միաժամանակ գլխաւոր հրամանատարն է կովկասեան բանակի: Դ. Մեխտիեվ վարում է ժողովրդական տնտեսութեան գործը, Գ. Նազարովը՝ արդարադատութեան, Բելեաեվը՝ ֆինանսների, Գ. Ատամանով՝ կառավարչ. գործերի վարիչ, իսկ Ն. Տէր-Մկրտչեան վարում է արդիւնաբերութեան բաժանմունքը:

ՀԱՅ ԹԵՐԹԵՐԸ ԵՒ ԱԴՐԲԷՋԱՆԸ

Մինչև այսօր հայ թերթերը արգելված էին Ադրբէջանի սահմաններում: Մեր ստացած տեղեկութիւնների համաձայն, Ադրբէջանի փոստատներում ստացվող հայ թերթերը կամ վառվում են կամ պատռելով ծախվում թուղթ առնտրականներին:

ՀՐԱՄԱՆ

ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԲՈԼՈՐ ԶՕՐԱՄԱՍԵՐԻՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Սրանով յայտնում եմ, որ Զանգեզուրի գիւղացիական համագումարի ներկայացուցիչների և կենտրոնական Ազգային Խորհրդի հրաւէրով ես ընտրված եմ իբրև գերագոյն զինւորական հրամանատար իր բոլոր լիազօրութիւններով:

Պահանջում եմ բոլոր զօրամասերի հրամանատարներից անշեղ կերպով կատարել իմ բոլոր հրահանգները՝ առանց մազաչափ անգամ փոխելու:

Պահանջում եմ բոլոր զինւորներից նոյն եղանակով կատարել իրանց անմիջական գլխաւորներից ստացած հրահանգները:

Յայտնում եմ նոյնպէս, որ երկրի զօրագոյն իշխանութիւնը միշտ հանդիսանալու է Զանգեզուրի կենտրոնական Ազգային Խորհուրդը, որի ձեռքին է մնում ներքին վարչական, պարենաւորման և ընդհանուր քաղաքականութեան գործերը:

Ազգային Խորհրդի այս ապագայում առած կարգադրութիւնները ժողովուրդը պէտք է իրագործէ անտրտունջ:

Որևէ ինքնագլուխ ձեռնարկութիւն կամ անիշխանական երևոյթ՝ թէ զինւորականների և թէ ժողովրդի կողմից պէտք է խեղդեմ ես տեղն ու տեղը՝ իմ ունեցած բոլոր միջոցներով:

Հրահանգում եմ մեր բոլոր զինւորական ույժերին ցոյց տալ հարկ եղած դէպքում ինչպէս Ազգ. Խորհրդին, նոյնպէս և նրա բոլոր պաշտօնեաներին ամենայն աջակցութիւն:

Գեներալ-Մայոր Անդրանիկ

6 նոյմ. 1918 Թ., Գորիս

ԱԴՐԲԷՋԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏ

Ադրբէջանի դիւանագիտ. ներկայացուցիչը Վրաստանում յայտնում է, որ մուսուլմ. նախկին ազգ. խորհուրդը, որ ս. թ. յունիսին լուծվեց Գանձակում, նորից պատրաստվում է մտնել Բագու, իբրև Ադրբէջանի ազգ. պարլամենտ: Յայտնելով այս մասին Մ. Իւ. Ջաֆարովը խնդրում է մուսուլմանական ազգ. խորհրդի բոլոր անդամներին, որոնք գտնվում են Ադրբէջանի սահմաններից դուրս, շտապել պարլամենտի նիստերին ներկայ լինելու, որ շուտով բացվելու է Բագուում:

ԳԵՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Հաղորդում են, որ գերմանական կառավարութեան գլուխ են կանգնած սոցիալիստներ Էբերտ, Շէյդեման, Լայսբերգ, Դիտման, Հաազէ և Բարտ: Սրանցից երեքը սոց. դեմոկրատ են, երեքը՝ անկախ սոցիալիստ:

Կաբինէտի մէջ մնացել են նախկին մինիստրները իբրև հմուտ մարդիկ. Նրանց մօտ կոնտրոլ են երկ երկու կօմիսար սոցիալիստներից:

ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Թիֆլիսում տեղեկութիւն է ստացվել, որ դաշնակիցները Գերմանիայի հետ հաշտվելու համար դրել են հետեւեալ պայմանները. 1) [illegible] մի մասը և զէնքի՝ թնդանօթների, գնդացիրների և ռազմամթերքի մի մասը յանձնել դաշնակիցներին. 2) Արևելեան ճակատում գերման զօրքերը վերադառնում են 1914 թ. օգոստոսի 1 ի սահմանները, մաքրելով Լեհաստանը:

ՎՈՐՕՆԷԺԻ ԳՐԱՒՈՒՄԸ

Դերբենտում հրատարակվող «Кавказъ» թերթը հաղորդում է, որ գեն. Կրասնովի զօրքերը գրաւել են Վորօնէժը:

ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆ ՄԻՍԻԱՅԻՑ

◆ Կ. Պօլսում կազմվել է գերման-աւստրիական բանակի բաժ. և զինւ. պատգամաւորների խորհուրդ, որը մի կոչով հրաւիրում է զօրքին՝ պահպանել զէնք, դիսցիպլինան, ենթարկվել օֆիցէրութեան և կռւել բոլշևիկեան գաղափարի դէմ:

◆ Նոր կառավարութիւնը վստահութիւն է յայտնել Հինդենբուրգին, որը իր հերթին կոչ է արել զօրքին լինել հանգիստ, որպէս զի զօրացրումը կատարվի կանոնաւոր:

◆ Գերման պատուիրակութիւնը հայ փախստականների համար իր միջոցներից յատկացրեց 100,000 ր. և մի վագոն ալիւր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

⁂ Ներքին գործ. մինիստրի կարգադրութեամբ, Բորժոմի կալուածների կառավարիչ ինժ. Պ. Զ. Վինոգրադովին արգելված է բնակվել Վրաստանի սահմաններում:

⁂ Բացվեց անդրկովկասեան սոց.-դեմօկրատական կուսակցութեան համագումարը, որի պրեզիդիումի մէջ մտան Ն. Ջխեիձէ (նախագահ), Ալ. Լոմթաթիձէ, Դ. Օնիաշվիլի (փոխ-նախագահներ): Պատուաւոր նախագահներ ընտրվեցին Ն. Ն. Ժորդանիա, Իր. Ծերեթելի և Ս. Ջիբլաձէ: Համագումարը տեւելու է 5 օր:

⁂ Հայաստ. գործ. հաւատարմատարը մի նամակով դիմել է Ե. Պ. Գեգեչկորիին, թէ ներքին գործերի մինիստրութեան կարգադրութեամբ խուզարկութիւններ են կատարվել ի մէջի այլոց և բնակարաններում հայ հասարակական գործիչներ Մամիկոնեանի և Կարճիկեանի, որոնք բացակայում են քաղաքից. ուստի Ջամալեանն առաջարկում է խուզարկութիւնների ժամանակ լինել փափկանկատ այդպիսի գործիչների վերաբերմամբ:

◆ Հայաստ. գործ. հաւատարմատարը յայտնեց արտաքին գործ. մինիստրին, թէ հայկ. միսիան հայոց կառավարութեան կողմից լիազորված է մշակել հայ վրացական պօստ-հեռագրութեան կոնվենցիայի նախնական պայմանները: Բանակցութիւնների վարումը յանձնված է Հայաստանի պօստային վարչութեան կառավարիչ Բոյնովսկիին:

◆ Զինւոր. մինիստրը յայտնում է, որ Բաթում մեկնել ցանկացողները պէտք է թոյլտուութիւն ունենան զին. մինիստրի կամ նրա օգնականների ստորագրութեամբ:

⁂ Թիֆլիսի շրջանային դատարանի ծառայողներին լիկվիդացիոն հաշիւ տալու համար կառավարութիւնը յատկացրեց 95,000 րուբլի:

⁂ Վրաստանի երկաթուղիների պետը կարգադրել է երկաթուղային և Փօթի նաւահանգստի բոլոր ծառայողներին, բացի վրացերէն և ռուսերէն լեզուներից, ոչ մի ուրիշ լեզուով չը խօսել թէ պաշտօնավարութեան ժամանակ և թէ հեռագրով ու հեռախօսով:

⁂ Նոյեմբերի 32 ին վերականգնվեց գնացքների երթևեկութիւնը Թիֆլիսի և Փօթի միջև:

⁂ Ներքին գործ. մինիստրը միլիցիական պաշտօնեաներին և նրանց ընտանիքներին նպաստ տալու համար կառավարութիւնից խնդրել է 200,000 րուբլի:

◆ Կառավարութեան լիազոր Ուխաձէ հեռագրում է, թէ Ախալցխայի գաւառում հաւաքված է 300 որբ: Խնդրում է նրանց համար Թիֆլիսում բանալ մի որբանոց:

⁂ Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում եղած գերման զինւորները իրանց օֆիցերների միջոցով ցանկութիւն են յայտնել գերման պատուիրակութեան՝ հայրենիք մեկնելու:

⁂ Արտիստական թատրոնում հինգշաբթի, նոյեմբերի 14-ին, Հայ Դրամատիկ Դերասանների Միութեան խումբը կը ներկայացնէ Շիրվանզադէի «Կործանվածը» մասնակցութեամբ Աբէլեանի:

ԿԵԱՆՔԸ ԳԱՒԱՌՈՒՄ

ԼՈՒՐԵՐ ՋԱՔԱԹԱԼԱՅԻՑ

Համաձայն թիւրքաց հրամանատարութեան կարգադրութեան, տեղիս բերդում բնակութիւն հաստատած թիւրքական զօրքը մեկնեց այստեղից դէպի Գանձակ, հետը տանելով բերդի մէջ գտնված ռազմամթերքը և այն բոլոր ահագին գոյքն ու հարստութիւնը, որ թողել էր ռուսաց զօրքը:

Զարիք դարձած թիւրքական զօրքը հարիւրաւոր սայլերով փոխադրեց ամեն ինչ ձրիաբար, որ հոգաց շրջանի ազգաբնակութիւնը, և այդպիսով մի փոքր շունչ քաշեց: Քիչ թւով թիւրք ասկէրներ մնացել են այստեղ:

⁂ Սոսկալի է հայերի վիճակը շրջանում, որոնց վրա նայում են մահմեդականները ինչպէս մորթելու կենդանիների վրա: Ամեն քայլափոխում անարգում ու անպատւում են: Մթերքները խիստ էժան են:

ՎՐԱՑ ԶՕՐՔԸ ԼՕՌՈՒՄ

«Աշխատաւորին» գրում են.

«Լոռու շրջանի հայ-վրացական սահմանագծի յայտնի կոնֆլիկտի ժամանակ վրացի զինւորներն իրանց օֆիցերների առաջնորդութեամբ խուզարկելու պատրուակով մտան Այգեհատ և Արդուի գիւղերը և փառաւոր կերպով կողոպտեցին՝ տանելով իւղ, պանիր, շորեղէն, նոյն իսկ կանանց վրայից հանդերձներ խլելով, ձիեր և թամբեր: Դիմադրողներին հրացանների փողերով հարուածում էին: Օգտվելով ուսուցիչ Աղասի Հովսէփեանի բացակայութիւնից՝ նրա տունը, որտեղ դրված էին և ուսուցիչ Յարութիւն Դավթեանի տան իրերը, բոլորովին կողոպտեցին: Կոտրեցին փակած տան դուռը, հարևանների ներկայութեամբ տարան մօտ 8000 րուբլու շորեղէն, արծաթեղէն, մեղր, սապոն, թէյ, կօֆէ և ուրիշ բազմաթիւ մանր իրեր: Չը բաւականանալով տնից վերցրած մեղրով, յարձակվեցին փեթակների վրա և տարան 30 շրջանակ: Երկու փեթակ էլ հանգցրին: Այս մասին արձանագրութիւն է կազմված: Հայ գիւղացիները զարմանալով միմեանց պատմում են, որ վրացի զինւորներն էլ անում են այն բոլորը, ինչ որ անում էին թիւրք ասկերները:»

ժողովրդի շահերը: Սակայն դուք էլ ձեր հերթին այդպէս էք հասկանում վրաց ժողովրդի շահերը: Մեր առաջ ծառացած է «Դաշնակցութիւն» կուսակցութիւնը, որ կռւում է Վրաստանի դեմօկրատիկ հանրապետութեան հետ: Այստեղ գործում են այնպիսի տարրեր, որոնք ձգտում են դէպի այն, որ հայ ժողովուրդը՝ զէնքը ձեռքին՝ դուրս գայ վրաց ժողովրդի դէմ, և նրանք կը պանծան իրանց յաղթանակով, եթէ նրանց այդ աջողվի և վրաց ժողովուրդը պարտված լինի: Նոյն ելակէտը ունեն և մեր նացիոնալիստները, որոնք իրանց յաղթանակ տարած կը համարեն, եթէ այդ ընդհարումը իրականանայ և հայ ժողովուրդը պարտութիւն կրի: Վրաց դեմօկրատիայի անունից ես այստեղ յայտարարում եմ, որ մենք մինչև վերջին հնարաւորութիւնը պիտի անհաշտ կռիւ մղենք այդպիսի քաղաքականութեան դէմ (ծափեր): Այդպիսի մի կռւում ոչ մի ժողովուրդ յաղթող չի հանդիսանայ և եղբայրական արիւնը կընկնի երկու իսկ ժողովուրդների գլխին: Այս պարլամենտը քանիցս վկայ է եղել մեր կռւին վրաց շովինիստների դէմ. և ահա այսօր մեր առաջ անհերքելի ձեւով ծառացած է հայկական նացիոնալիզմի կրօնը: Ճիշդ այնպէս, ինչպէս նորերս մեր նացիոնալիստներին թւաց, որ մի մեծ պետութեան գալուստը կը տայ նրանց հնարաւորութիւն իրականացնել իրանց նացիոնալիստական դիտաւորութիւնները, ճիշդ այսօր մենք տեսնում ենք, որ արթնանում են հայկական նացիոնալիզմի մութ դիտաւորութիւնները այն միջոցին, երբ մօտենում է մեզ մի այլ մեծ պետութեան ույժը: Մենք միշտ պէտք է մաքառենք աւանտուրիստական քաղաքականութեան դէմ: Մենք հաւատացած ենք, թէ ինչպէս որ չիրագործվեցին այն ժամանակ վրացի նացիոնալիստների տենչերը, այնպէս էլ այժմ չի իրագործվի հայ նացիոնալիստների փափագը: Եթէ մեզ մօտ գայ եւրոպական ույժը, նա չի ցանկանայ ձուլել իր քաղաքականութիւնը նացիոնալիստական կրքերի հակադեմօկրատական քաղաքականութեան հետ: Անշուշտ պիտի յուսախաբվեն այն տարրերը, որոնք ուզում են օգտագործել եւրոպական ույժը իրանց ստրկական տենչերի համար: Մի խումբ աւանտուրիստ առաջնորդների պատասխանատուութիւնը մենք չենք բարդում ժողովրդի վրայ: Մենք կոչ ենք անում հայ դեմօկրատիային այն ուղիի վրայ, որի վրայ կանգնած է վրաց դեմօկրատիան, որովհետև դա այն ուղիղ դիրքն է, որ ճանաչել երբէք չը կարողացաւ Դաշնակցութիւնը:

Մենք առաջարկում ենք կառավարութեանը եռանդուն կերպով մաքառել պետութեան թշնամիների դէմ, սակայն այն եղանակով, որ անփոփոխ մնայ այն իրականութիւնը, որ վրաց ժողովուրդը նուաճել է իր ազգային ազատութիւնը ոչ թէ եղբայրակից ժողովրդի հետ կռւելու հետեւանքով, այլ յենվելով ժողովուրդների համերաշխութեան և մաքառելով պրովոկացիայի դէմ, և երբէք չէր կառուցել իր պետականութիւնը օտարի դժբաղդութեան վրայ:

Պաւլիեվ եւ Մգեբրովեան կոչ են անում Վրաստանի դեմօկրատիային բոլոր ույժերով մաքառել ամեն տեսակ պրովոկացիայի դէմ:

Նիստը փակվում է կէս գիշերին.

(Վ. Հ. Գ.)

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԵԳԻԱ
Հրատարակիչ՝
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԽՈՒՄԲ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 Թ.
(Դուգինա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Բաց է
Ամեն օր, բացի կիրակի օրերից
Ս. Ն. «914»-ի ներարկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութիւն վեներական (սիֆիլիս) հիւանդութիւններ:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—10—12 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութիւն և ծաղկահատ:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—12—1 ժ. մաշկի և վեներական (սիֆիլիս) հիւ.
Ե. Ա. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՑ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ.
Դ. Ի. ՋԱՓԱՐԻՁԷ—10—11 ժ. ականջի, քթի և կոկորդի հիւ.
Խ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մասնագէտ երեխ. հիւ.
Վճարը 3 ր. [illegible]
[illegible]
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԲԻՆԷՏ
ֆելդշ. Ա. ՍԱՀԱԿԵԱՆԻ
Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրոնիքական տրիպերի, շանկրի, սիֆիլիսի (ներարկումն Էրլիխի իսկական «914»-ի և «606»-ի հմուտ մասնագէտ բժշկի հետ) սեռական թուլութեան, և այլ վեներական ցաւերի. Նորագոյն մէթոդներ և էլեկտրականութիւն: Կաշուի տակ սրսկումներ, լուացումներ, վէրքի փաթաթումն, բանկա կպցնել, ծաղկահատութիւն: Մասսաժ ձեռքով և էլեկտրականութեամբ: Վորօնցովի արձանի մօտ՝ Семеновская ул. № 9. Ընդունելութիւնը ամեն օր՝ 4—6 ժամը ճաշից յետոյ, կանանց 6—7-ը:
444 100—81

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԲԺ. Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆՑԻ
Համաճարակային
ԻՆՖԼՈՒԷՆՑԱ
«ԻՍՊԱՆԿԱ» բրօշիւրը.
Գտնւում է՝ հեղինակի մօտ Бебутовская ул. 56.
(օ. մ.) 1031. 4—2

„ՄՇԱԿԻ" ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ
Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւններից

1) Մանրանկարներ, Վրձինի I և II հատորներ	2 ր. 25 կ.
2) Մի ամիս Արեւելքում, Հ. Առաքելեանի	60 կ.
3) Հայկական տպագրութիւն, Լէօյի, հատոր I, երկրորդ տպագրութիւն	1 ր. 80 կ.
4) Դէպի Արարատ, Արշ. Մխիթարեանի	60 կ.
5) Արբեցողութեան դէմ	23 կ.
6) Ձեռնարկ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանահիւսութեան. Հ. Առաքելեանի	75 կ.
7) Յուշարձան ողբացեալ Արփիար Արփիարեանի	60 կ.
8) Մի հնչիւնին մի գիր (ուղղագրութիւն), Ստ. Մալխասեանցի	30 կ.
9) Ընկերվարութիւն եւ հայ ընկերվարականներ, Մուշեղ եպիսկոպոսի	50 կ.
10) Ճորտերի ազատագրութեան յիսնամեակը, նկարներով	23 կ.
11) Անգլիայի հասարակական եւ քաղաքական կեանքը, թարգմ. Մ.-ի	23 կ.
12) Միլտոնի կեանքը և գրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	40 կ.
13) Գալիլէյ կեանքը և գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի	45 կ.
14) Աստուածային հրահանգ հանրապարտուց, Մակար եպ. Բարխուդարեանի	1 ր. 20 կ.
15) Գրիգոր Օտեան.	2 ր. 25 կ.
16) Խաղաղասիրական պատանեկական գիրք, Արթիւր Միւլլերի, թարգմ. Իս. Յարութիւնեանի	60 կ.
17) Литургія Армяно-григоріанской церкви, Ս. ք. Տէր Յովհաննիսեանի	1 ր. 50 կ.
18) Отвѣтъ Архіепископа Мелхисетека Мурадьяна на посланіе Римскаго Папы Льва XIII	30 կ.
19) Տուբերկուլօզը, թոքախտ եւ հասարակութիւնը, բժ. Արտ. Շխեանի	40 կ.
20) Туберкулозъ, Чахотка и Общество, բժ. Արտ. Շխեանի	40 կ.
21) Հայ-վրացական յարաբերութիւնների պրոբլեմը, Բ. Իշխանեանի	30 կ.
22) Ռուսական վանքերը Ֆինլանդիայում, Գ. Տէր-Ռուբինեանցի	15 կ.
23) Ազգային երկու մեծութիւններ, Գ. Զթենցի	5 կ.
24) Հառաչանք, բանաստեղծ. հաւաքածու Վարդան Բամալեանի	45 կ.
25) Վիլհելմ եւ ուրիշ պատմուածքներ, Գիժի	23 կ.
27) Զգուանքներ, Գր. ա. ք. Մանդակունու	30 կ.

Վերադիր վճարով պատուէր չէ ընդունվում: Ճանապարհածախսը պատուիրողի վրայ:

Типографія "ЭКОНОМІЯ" Тифлисъ.